# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝** Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման գործիքների կիրառումը(ձևերը և միջոցները) և դրանց ուսումնադաստիարակչական աշխատանքի ճիշտ կազմակերպումը

**Հաստատություն՝** Երևանի հ. 96 <<Հեքիաթ>> մսուր մանկապարտեզ

**Դաստիարակ՝** Բալյան Սիրանուշ

**Ղեկավար՝** Պետրոսյան Քրիստինե

**Երևան 2022**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

1.ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱՒՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ……4

2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ…… 7

3.ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ……10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…… 14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…… 16

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Դեռևս 1999 թ. ապրիլի 14-ին «Կրթության մասին» ՀՀ օրենքով սկիզբ դրվեց հատուկ կրթության համակարգի բարեփոխումներին ու ներառական կրթության հիմնադրմանը, որի հիմքում յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն է, կրթության կազմակերպումն իր համայնքում՝ առանց ընտանիքից մեկուսացնելու, և կրթության գործընթացին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսման սկզբունքների ապահովումը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հասարակության մեջ ներառման գործընթացը կախված է այդ երեխաների նկատմամբ հասարակության վերաբերմունքից, նրանց կյանքի և առանձնահատկությունների մասին շրջապատողների տեղեկացվածությունից:

Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է յուրաքանչյուր սանի համար ապահովվում, որ նա ստանա իր կարողություններին ու կարիքներին համապատասխան որակյալ կրթություն: Իսկ որակյալ կրթության ապահովման համար անհրաժեշտ է ուսումնական գործընթացում երեխային դիտել և գնահատել որեպես անհատ՝ իր ընդունակություններով, կարողություններով, հետաքրքրություններով ու դժվարություններով:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը երեխայի զարգացման տարբեր փուլերում նրա մասին բազմաբնույթ տեղեկությունների հավաքագրման ու տվյալների համակարգման գործընթաց է, որն իրականացվում է երեխայի բնականոն միջավայրում՝ ապահովելու երեխայի ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորումը, անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների և միջավայրային հարմարեցումների տրամադրումը:

## 1.ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱՒՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձը այն անձն է, ում ֆիզիկական և (կամ) մտավոր, հոգեկան զարգացման առանձնահատկությունները խոչընդոտում են կրթական ծրագրերի յուրացմանը՝ առանց կրթության առանձնահատուկ պայմանների:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության նպատակը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան և առողջությանը համարժեք ուսումնական միջավայրում նրանց հասարակական հարմարեցման, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերման, աշխատանքային, մասնագիտական գործունեության և ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովումն է:

Կրթության առանձնահատուկ պայմանները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի կրթության և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ հատուկ կրթական ծրագրեր և ուսուցման մեթոդներն են, ուսուցման անհատական տեխնիկական միջոցները, կենսագործունեության միջավայրը, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունները, առանց որոնց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումը դժվար է կամ անհնարին:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք ուսումնառվում են հատուկ կրթական ծրագրով, որը պետք է նպաստի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի համակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրություններին և կարողություններին համապատասխան կրթության յուրաքանչյուր մակարդակի բովանդակությունը, մասնագիտական ուղղվածության և անհրաժեշտ գիտելիքների ու հմտությունների ծավալը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսումնառությունը կազմակերպվում է կամ հատուկ կրթական հաստատությունում՝ կազմակերպություն, որը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար իրականացնում է կրթական ծրագրեր՝ կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով, կամ ներառական կրթության միջոցով, որը ենթադրում է րթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումը հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ:

Երբեմն կազմակերպվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցում, որը ենթադրում է առողջական վիճակի պատճառով ժամանակավորապես կամ մշտապես ուսումնական հաստատություն չհաճախող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի համար համապատասխան ուսումնական հաստատության մանկավարժների կողմից տվյալ անձի տանն իրականացվող հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի ուսուցման կազմակերպում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթությունը կարող է իրականացվել՝

-պետական և ոչ պետական հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ ներառական կրթության և տնային ուսուցման ձևով.

- հատուկ կրթական հաստատություններում՝ հատուկ կրթության և ուսուցման ձևով.

-բուժական հաստատություններում (երկարատև ստացիոնար բուժման դեպքում)՝ տնային ուսուցման ձևով:

Հատուկ կրթական ուսումնական հաստատությունների տիպերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով:

Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների համար կրթության պայմանների ստեղծումը, պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրերին համապատասխան:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ֆինանսավորումը կազմակերպում է ՀՀ կառավարությունը՝ սահմանելով ֆինանսավորման չափաքանակ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նվազագույն ֆինանսավորման չափ, որն անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների լիարժեք կրթության ապահովման համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթություն իրականացնող ուսումնական հաստատության ֆինանսավորման հիմնական աղբյուրները պետական և համայնքային բյուջեներն են, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց (ներառյալ՝ օտարերկրյա պետությունների) կատարած ներդրումները, սեփական միջոցները, որոնք գոյացել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված գործունեությունից և այլ աղբյուրներից:

## 2.ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2020 թ. մայիսի 6-ին ԱԺ-ի հաստատմամբ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում կատարվեցին որոշակի փոփոխություններ։ Օրենքի առանձնահատկություններից է նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրումը, որը, համաձայն Կառավարության հաստատած գործողությունների պլանի և ժամանակացույցի, իրականացվելու է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը։

Օրենքում ամրագրված են նոր հասկացություններ, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդունելության ընթացակարգը և այլն։ ‹‹Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներով››:

‹‹Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներով›› (8-րդ հոդված կետ 3)։

‹‹Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրումը›› (9-րդ հոդված)։

‹‹1. Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի տված՝ երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացության հիման վրա համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինը վկայագրում է երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը։

2. Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագրի տիպային ձևը մշակում և հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը։

3. Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխային տրամադրվում են նախադպրոցական կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ»:

«Ծնողների (երեխայի օրինական ներկայացուցիչների) իրավունքները և պարտականությունները » (16-րդ հոդված)

«Ծնողները (երեխայի օրինական ներկայացուցիչները) իրավունք ունեն՝ դիմելու տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն՝ իրենց երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելու նպատակով. մասնակցելու երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատմանը. ուսումնական հաստատությունից պահանջելու խելամիտ հարմարեցումներ երեխայի՝ մյուսների հետ հավասար հիմունքներով նախադպրոցական կրթության իրավունքն իրացնելու նպատակով. մասնակցելու երեխայի անհատական զարգացման և ուսուցման պլանի մշակմանը» :

«Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսատնտեսական գործունեությունը» (28-րդ հոդված կետ 3): «3. Կրթության կազմակերպման համար լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակով օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն սաները, որոնք ունեն հետևյալ ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ՝ 1) ձայնի և խոսքի, 2) լսողական, 3) տեսողական, 4) ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն ունեցող, 5) շարժողական: Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար 10 սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, սահմանում է Կառավարությունը, որի ընդունման ժամկետ սահմանվել է 2021 թվականի մարտի 15-ը»:

Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաներն առավել խոցելի են նախադպրոցական կրթության հաստատություններից դուրս մնալու տեսանկյունից: Ոչ միայն ծնողները նախաձեռնող չեն իրենց ԿԱՊԿՈՒ երեխաներին նախակրթարան, մանկապարտեզ

տեղավորելու հարցում՝ նախընտրելով հատուկ վերականգնողական կամ զարգացման կենտրոնները, այլև մանկապարտեզների տնօրենները ցանկություն չունեն ներգրավել ԿԱՊԿՈՒ երեխաներին՝ պատճառաբանելով, որ մանկապարտեզում, նախակրթարանում չկան համապատասխան պարագաներ, մասնագետներ և հատուկ խնամքի պայմաններ: Նախադպրոցական կրթությունից դուրս մնացող երեխաների բացահայտման և հավաքագրման մեխանիզմները բացակայում են, պատասխանատու մարմինները չունեն համապատասխան լիազորություններ: Ավելին՝ նախադպրոցական կրթությունը Հայաստանում պարտադիր չէ:

Բացի այդ, նախադպրոցական տարիքի և կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների մեծ մասը թերի է տեղեկացված ներառական կրթության էության, նպատակների մասին: Հենց սրանով է պայմանավորված կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների ծնողների բացասական վերաբերմունքը. նրանք կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին փորձում են հեռու պահել իրենց երեխաներին և չեն ընդունում ներառականության քայլերը, պահանջում են կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցումը կազմակերպել հատուկ մանկապարտեզներում և նախակրթարաններում: Ներառական կրթության դասընթացներին մասնակցելու անհրաժեշտություն տեսնում են ոչ միայն ԿԱՊԿՈՒ, այլև ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները:

## 3. ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

1. Նախադպրոցական մակարդակում ծառայությունները տրամադրվում են այն երեխաներին, ովքեր տվյալ մակարդակում սահմանված կարգով գնահատվել են և հաստատվել է, որ ունեն մանկավարժահոգեբանական աջակցության կարիք:

2. Տվյալ մակարդակում ծառայությունները տրամադրվում են Նախադպրոցական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՆՈՒՀ) մանկավարժների և ՄՀ ծառայության կողմից՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության խմբի միջոցով (այսուհետ՝ ՄՀ աջակցության խումբ): Եթե հաստատությունում չկան անհրաժեշտ մասնագետները, ապա նրանք հրավիրվում են տվյալ հաստատությունը սպասարկող Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնից (այսուհետ՝ ՏՄԱԿ): Տվյալ մակարդակում ծառայությունները տրամադրվում են Նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների հիման վրա՝ Կանխարգելիչ միջամտությունների պլանով:

3. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում նախադպրոցականի Նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների ամփոփումից հետո.

- Նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքում թեթև աստիճանի դժվարությունների արձանագրման դեպքում, նախադպրոցական ուսումնական հաստատության կողմից տրամադրվում է լրացուցիչ աջակցություն՝ առկա խնդիրների հաղթահարման նպատակով: Այն դեպքում, եթե մանկավարժը գտնում է, որ երեխան ունի ՄՀ ծառայությունների կարիք, ապա նախադպրոցական ուսումնական հաստատությունը համապատասխան հայտով դիմում է ՏՄԱԿ-ին: ՏՄԱԿ-ի մասնագետները՝ երեխային հետազոտելուց հետո, կարիքի դեպքում կազմակերպում են ծառայության տրամադրումը:

- առավելագույնը 15-օրյա ժամկետում, ՄՀ աջակցության խումբը և մանկավարժները ծնողի մասնակցությամբ, մշակում են երեխայի Կանխարգելիչ միջամտությունների պլանը (Ձև1): Կանխարգելիչ միջամտությունների պլանում ներառվում է ՄՀ աջակցող

ծառայությունների տեսակը, ժամանակահատվածը, տևողությունն ու ծավալները: ՄՀ աջակցության յուրաքանչյուր ծառայության ծավալը կազմում է շաբաթական 45 րոպե:

- երեխային տրամադրվող ՄՀ աջակցող ծառայությունների ժամանակացույցը հաստատում է հաստատության տնօրենը և պատճենը տրամադրում երեխայի ծնողին:

6. Կանխարգելիչ միջամտությունների պլանը մշակվում և իրականացվում է նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժների կողմից մեկ կիսամյակի համար: Անհրաժեշտության դեպքում Կանխարգելիչ միջամտությունների պլանի մշակմանն ու իրականացմանը մասնակցում է նաև տվյալ հաստատության կամ ՏՄԱԿ-ի ՄՀ աջակցության խումբը:

7. Նախադպրոցական մակարդակում ՄՀ աջակցության կարիք ունեցող յուրաքանչյուր երերխային տրամադրվող ՄՀ աջակցող ծառայությունների ժամանակահատվածը, տևողությունը, ծավալը, ծառայության տեսակը և տրամադրման գրաֆիկը մշակվում է նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների հիման վրա՝ նախադպրոցական ուսումնական հաստատության/ՏՄԱԿ-ի ՄՀ աջակցության խմբի կողմից և հաստատվում է հաստատության տնօրենի կողմից:

8. Ծառայությունների տրամադրման արդյունավետության և որակի ապահովման համար պատասխանատվությունը կրում է հաստատությունը՝ ի դեմս նախադպրոցական ուսումնական հաստատության կամ ՏՄԱԿ-ի ՄՀ աջակցության խմբի:

9. Նախադպրոցական ուսումնական հաստատությունը ՏՄԱԿ-ին է փոխանցում տեղեկատվություն Նախադպրոցական մակարդակում Կանխարգելիչ միջամտությունների պլանով աջակցության ծառայություններ ստացող երեխաների մասին (քանի երեխա է ստանում աջակցություն և քանի երեխա այլևս չունի աջակցության կարիք, քանի երեխա է փոխանցվել Տարածքային մակարդակ):

10. ՏՄԱԿ-ը յուրաքանչյուր եռամսյակ իրականացնում է այցեր նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ Նախադպրոցական մակարդակում իրականացվող աշխատանքները մշտադիտարկելու նպատակով՝ փաստաթղթային փաթեթ

(Նախադպրոցական մակարդակի գնահատման արձանագրություն, Կանխարգելիչ միջամտությունների պլան) և մանկավարժների ու ՄՀ աջակցող խմբի կողմից իրականացվող աշխատանքներ:

Իրականացվող մշտադիտարկումների ժամանակ ՏՄԱԿ-ի աշխատակիցները նաև ուշադրության կենտրոնում են պահում ուսումնական հաստատության բոլոր երեխաներին՝ Նախադպրոցական մակարդակում երեխաների խնդիրների և դժվարությունների վաղ հայտաբերման նպատակով:

11. ՄՀ աջակցության խմբի կազմում ընդգրկվում են նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատող(ները), հատուկ մանկավարժը (ները), հոգեբանը, սոցիալական մանկավարժը և բուժքույրը (առկայության դեպքում):

12. Նախադպրոցական մակարդակում մանկավարժները և ՄՀ աջակցության խումբը սերտ համագործակցելով երեխայի ծնողների հետ՝ իրականացնում են Կանխարգելիչ միջամտությունների պլանով նախատեսված գործողությունները և փորձում երեխային աջակցել, որպեսզի նախադպրոցական կրթական (հիմնական) ծրագրերը յուրացնի հասակակիցների հետ զուգընթաց:

13. ՄՀ աջակցող ծառայությունները երեխային տրամադրվում են պարապմունքներից հետո՝ ըստ որոշված ծավալի և տևողության, սակայն օրական 1,5 ժամից ոչ ավելի:

14. ՄՀ աջակցության խումբը պարապմունքների ընթացքում անցկացնում է դիտարկումներ, խորհրդատվություն է տալիս մանկավարժական աշխատակիցներին պարապմունքների պլանավորման վերաբերյալ (նախադպրոցական ուսուցման ռազմավարություններ, մեթոդներ, երեխայի մասնակցությունը բարձրացնող առաջարկություններ), իրականացնում է երեխայի Կանխարգելիչ միջամտությունների պլանով նախատեսված ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման այլ աշխատանքներ:

15. Յուրաքանչյուր ամիս ՄՀ աջակցության խումբը և մանկավարժական աշխատողները Կանխարգելիչ միջամտությունների պլանում արձանագրում են իրականացված աշխատանքները՝ երեխայի հաջողություններն ու դժվարությունները, իսկ կիսամյակի

ավարտին Կանխարգելիչ միջամտությունների պլանի նվաճումներ բաժնում գնահատում են ստացված արդյունքները:

16. Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը առնվազն ամիսը մեկ անգամ հրավիրում է տվյալ երեխայի մանկավարժական աշխատողների և ՄՀ աջակցության խմբի անդամների հանդիպում՝ ամփոփելու տվյալ ամսվա ընթացքում երեխայի Կանխարգելիչ միջամտությունների պլանով նախատեսված աշխատանքների, այդ թվում՝ ՄՀ աջակցող ծառայությունների արդյունքները: Անհրաժեշտության դեպքում հանդիպմանը կարող են հրավիրվել երեխայի ծնողն ու ՏՄԱԿ-ի մասնագետները:

17. Երեխայի Կանխարգելիչ միջամտությունների պլանով նախատեսված արդյունքների ամփոփումն իրականացվում է կիսամյակի ավարտին՝ նկարագրական տեսքով, որը տրամադրվում է ծնողին:

18. Անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, հաջորդ կիսամյակի Կանխարգելիչ միջամտությունների պլան մշակելիս, վերանայվում են Կանխարգելիչ միջամտությունների պլանով սահմանված խնդիրները և գործողությունները, ինչպես նաև աշխատանքների ծավալները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ներառական կրթության նպատակները, էությունն ու գաղափարը մեծամասամբ հասանելի չեն ԿԱՊԿՈՒ և ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներին, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին: Նրանք համընդհանուր ներառականության մասին գրեթե տեղեկացված չեն:

2. Առկա է նաև մասնագետների պակասի խնդիր:

3. ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների և համայնքապետարանի միջև չկա համագործակցություն և կապ:

4. Խորհրդային տարիներին են կառուցվել հատուկ դպրոցները (որոնք վերակազմակերպվել են տարածքային մանկավարժահոգեբական կենտրոնների) և նախադպրոցական ուսումնական հաստատությունները, որոնց շենքային պայմաններն հարմարեցված չեն ԿԱՊԿՈՒ երեխաների պահանջներին:

5. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում և տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների կողմից ծառայությունների մատուցման որակը չի վերահսկվում, ինչի պատճառով շարունակվում են ծնողների դժգոհությունները:

6. Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման վերաբերյալ ծնողներն ունեն տարբերակված մոտեցում: Նրանք նաև բողոքում են երեխաների գնահատման և վկայագրման գործընթացի կարճատև լինելուց, որի հետևանքով հաճախ չեն համաձայնում գնահատման արդյունքների բովանդակության հետ և ստիպված են դրանք բողոքարկել հանրապետական կենտրոններում:

Առաջարկություններ՝

1.Ապահովել նախադպրոցական ուսումնական հաստատությունների և տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների շենքային պայմանների վերագնահատումը և, սահմանված ժամանակացույցի համապատասխան, նշված հաստատություններում ապահովել ֆիզիկական մատչելիություն:

2. Ձեռնամուխ լինել նեղ մասնագիտական և ուսումնաօժանդակ նյութերի հրատարակմանը և դրանց տրամադրմանը նախադպրոցական ուսումնական հաստատություններին և տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններին։

3. Ներդնել մեխանիզմներ նախադպրոցական ուսումնական հաստատությունների և տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների կողմից ծառայությունների մատուցման որակը վերահսկելու և բարելավելու նպատակով։

4. ԿԱՊԿՈՒ երեխաների ծախսերի ֆինանսավորման սանդղակը մշակելուց հետո այն ներկայացնել հանրային քննարկման և հաշվի առնել մարզերում համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովի լինելու հանգամանքը։

5. Դյուրացնել և շարունակաբար բարելավել ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքի գնահատման գործընթացը՝ այն դարձնելով ավելի երկար, համակողմանի և թափանցիկ։

6. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների, ծնողների համար ամսական մեկ-երկու անգամ կազմակերպել կլոր սեղան քննարկում՝ ոլորտում փորձ ունեցող մասնագետների ներգրավմամբ։

7. Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կարիքի գնահատմանը պարտադիր մասնակից դարձնել նախադպրոցական ուսումնական հաստատության այն մասնագետին, ով աշխատել է տվյալ երեխայի հետ։

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Նախադպրոցական կրտսեր առաջին խմբի կրթական համալիր ծրագիր - կրտսեր առաջին խումբ (2-3 տարեկաններ)
2. Նախադպրոցական կրտսեր երկրորդ խմբի կրթական համալիր ծրագիր - կրտսեր երկրորդ խումբ ( 3-4 տարեկաններ)
3. Նախադպրոցական միջին խմբի կրթական համալիր ծրագիր -միջին խումբ(4-5 տարեկաններ)
4. Նախադպրոցական ավագ խմբի կրթական համալիր ծրագիր
5. ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ,
6. Հավասար պայմաններ և հավասար հնարավորություններ, զեկույց, 2021,
7. ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում,
8. ՀՀ ՕՐԵՆՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, Ընդունված է 2005 թվականի մայիսի 25- ին